ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՈՎ ՈՎ Է ՀԱՅԵՐ

Կենսագրական հանրագիտարան

ՀԱՏՈՐԻ ԳԻՏԱԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ.Մ. ԱՅՎԱԶՅԱՆ (գլխավոր խմբագիր-տնօրեն), Գ.Վ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ֆ.Մ. ԱՂԱՄԱԼՅԱՆ, Հ.Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ), Վ.Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ, Ս.Տ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Վ.Գ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Հատոր երկրորդ

Ճաղարյան-Ֆրիկ

2007

ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ Հրաչ Կարապետի (ծ. 16.12. 1962, Բեյրութ), սոցիոլոգ: Սոցիոլոգիայի դ-ր (2003): 1984-ին ավարտել է Նյու Յորքի Կոնկորդիա քոլեջի արվ-ների բաժնի (գրակ-յան) բակալավրատուրան, 1987-ին՝ Նյու Յորքի Ս. Վլադիմիր աստվածաբան. ճեմարանի, 1991-ին՝ Կալիֆոռնիայի Նորթրիջի պետ. համալսարանի պետ. կառավարման մագիստրատուրաները: 1990–95-ին հիմնադրել ու խմբագրել է «Ուինդոուս Քուորթելի» (անգլ.) պարբ-ը: 1995–98-ին աշխատել է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի գիտ. հաստատություններում՝ որպես Կովկասի և կասպիական տարածաշրջանի վերլուծաբան և խորհրդատու, 1998–2000-ին՝ «Հայկական միջազգային պարբերականի» ավագ խմբագիր: 2003-ից ղեկավարում է Քեմբրիջի համալսարանի եվրասիական գիտ. հետազոտությունների ծրագիրը:

Աշխատությունները վերաբերում են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, Կովկասի և կասպիական տարածաշրջանի, ինչպես նաև հայ եկեղեցու և սփյուռքի խնդիրներին: